ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականին ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 34,241.6 մլն դրամ՝ պլանավորված 23,000 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 48.9 տոկոսով կամ 11,241.6 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 28.3 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 13,511.2 մլն դրամ:

Դեկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 7,519.9 մլն դրամ՝ պլանավորված 4000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 88.0 տոկոսով կամ 3,519.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 83, լուծարվել՝ 15 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են թվով 7 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 4 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 62 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 26-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 13-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության և 3 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5,605 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5,465:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 29 պայմանագրեր:

Հաշվետու ամսում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ կայացվել և ուժի մեջ են մտել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման թվով 24 որոշումներ՝ 95.1 մլն դրամ գումարի չափով, ԱՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման թվով 2 որոշումներ՝ 15.3 մլն դրամ գումարի չափով:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 193 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 4 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2021 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 10,193.4 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 5,380.2 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 6 տեղեկանքներ, մերժվել՝ 2 դիմում:

Հաշվետու ամսում ԱՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին», ««Հարկային ծառայության մասին» և «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքները: ԱՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Տնտեսավարող սուբյեկտների կողմից Արցախի Հանրապետության տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական

արժեքների հաշվառման քարտերի ձևերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով փոփոխություններ են կատարվել «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» և «Հարկային մարմնում ծառայողական քննության անցկացման մասին» հրամաններում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Նոր տեսակի կորոնավիրուսի (COVID-19) տարածմամբ պայմանավորված ամենօրյա կտրվածքով իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված կոմիտեի գործառույթների իրականացման ընթացքում աշխատակիցների և հարկ վճարողների անվտանգության ապահովմանը:

2021 թվականի 4-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 907 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, այդ թվում՝ ներկայացվել պարզաբանումներ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 30-րդ

կետի կիրառման և 2022թ. հունվարի 1-ից եկամտային հարկի և սոցիալական վճարի դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ:

Արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության վարչությունում պայմանագրային հիմունքներով աշխատելու համար կազմակերպվել է հարցազրույց: Հարցազրույցը հաղթահարած 2 դիմորդներ ներկայումս անցնում են փորձուսուցում:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 448, ելքագրվել՝ 261 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 1 գրություն: